ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«21» ապրիլի 2023թ.
N 38-01

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ,
քաղաքապետի պաշտոնակատար
պարոն Լևոն Հովհաննիսյանին

Հարգելի պարոն Հովհաննիսյան

Համաձայն «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի՝ իրազեկում ենք Ձեզ, որ Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը 2023թ. մայիսի 1-ին կազմակերպում է խաղաղ երթ Աշխատանքի օրվա կապակցությամբ:

Երթը կմեկնարկի Ավետիք Իսահակյանի արձանի մոտից (մետրոյի «Երիտասարդական» կայարանի մոտ)՝ ժամը 12:30-ին, կշարունակվի Աբովյան փողոցով մինչև Ազնավուրի հրապարակ, կավարտվի մոտավոր 14:00-ին:

Երթի մասնակիցների սպասվող թիվը մոտ 500 է:

Երթի ժամանակ կօգտագործվեն բարձրախոս, դրոշներ և պաստառներ՝ «Մայիսի 1-ը՝ Աշխատանքի օր», «Սոցիալականը՝ նյութականից առաջ», «Մարդը գերագույն արժեք է», «Հարկային արդարությունը անհրաժեշտություն է», «Հանրային ծառայողներին արժանապատիվ աշխատավարձ» և այլ կարգախոսներով:

Կից ներկայացնում ենք պետական ռեգիստրում ճյուղային հանրապետական միության գրանցման վկայականի, միության նախագահի անձնագրի պատճենները և ճյուղային հանրապետական միության նախագահության որոշումը երթն անցկացնելու մասին:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝
Հայաստանի պետհիմնարկների,
ՏԻՄ-երի աշխատողների
նախագահ՝ Հաստատվածէ թվային ստորագրությամբ **Անահիտ Ասատրյան**

Հասցե՝ 0010, ք. Երևան
Վ. Սարգսյան 26/3, 501 ս.

Address: 26/3 V. Sargsyan st,
Office 501, Yerevan, 0010

Адрес: 0010, г. Ереван
ул. В. Саргсяна 26/3, офис 501

Tel: +37410580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut